

ՏԻՔ ԵՒ ՏՆՈՐԷՆ


Ե. ԹՈՐՈՍՅԱՆ

Կամակ կամ որ եւ է

զրու թիւն պէտք է ուղղել առ  
Տնօրին ԱՐՇԱՆՈՅՍ րազմի  
ԳԱՇԻՐԷ (Նախնական)

E. TOROSSIAN  
Direc.-propr. du journal arménien  
ARCHAEOLOGIE  
LE CAIRE (EGYPTE)

Boîte Postale No.



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

|                   |    |
|-------------------|----|
| ԵԿԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ    |    |
| Տարեկան ողջ դահկն | 60 |
| Վեցամսեայ »       | 35 |
| ՍՏԱՐ ԵՐԿՐԵՆԵՐ     |    |
| Տարեկան Տրամիք    | 20 |
| Վեցամսեայ »       | 12 |

### Լ Ր Ա Գ Ի Ր

## ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՆՈՒԿ  
Եւ թղթատարի ծախքը  
Խնրագրութեան վրայ է :

Խնրագրութեան ուղղութեամբ  
գրութիւնք եւ չ'են տրուիր

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԻՔ  
Կանխիկ վճարելի էն

### ՀԱՆՐԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ

ՄԻՋԱՆԿԵԱԼԸ

Ճշմարիտ է որ մամուլը մեծ դերակատար  
մ'է հանրային կարծիքն ուղղելու և բարքը  
աղնուացնելու : Մա անհրաժեշտ պայմանաւ  
որ հրապարակագիրը ըլլայ ուղղամիտ և բա-  
րեբարոյ :

Նենդն ու սուտը միշտ ողբալի հետե-  
ւանքներ ունեցած են ո՛չ միայն անոնց հա-  
ւատք ընծայողներուն , այլ նաև դանոնք յե-  
րիւրողներուն համար , վարկաբեկ և անուա-  
նարկ ընելով այս վերջինները :

Կը յանձնարարենք ամեն հայու ուշի  
ուշով կարգաւ « Նոր Օր » ի 25 և 26 համար-  
ները :

Հոն պիտի գտնեն նախ հակասութիւն  
ներու կոյտ մը , որուն ծնունդ տուած է  
սուտ մը , ուրիշ սուտերու օգնութեամբ  
գէթ առժամանակս կանգուն պահելու պէտ-  
քը :

Ի միջի այլոց կը կարգանք որ Լսարան-  
ընթերցատուն ընկերութեան անդամներուն  
հետ համաձայնելով Մայր-Դիւանը հակառա-  
կած է եղեր լոյս տեսնելուն « Նոր Օր » ի որ  
յիշեալ ընկերութիւնը հաստատ պահելու ա-  
մենամեծ միջոց մ'էր : Ուրեմն Մայր-Դիւա-  
նը չ'էր ուզեր որ ընկերութիւնը ապրի :  
Գիշ յետոյ կը տեսնենք որ « Նոր Օր » ի  
պայմանագրութիւնը վաւերացուած է միև-  
նոյն Մայր-Դիւանի կողմէն , վաւերացում  
առանց որոյ անկարելի էր որ ծնունդ առ-  
նէր այդ թերթը :

Ուրեմն Մայր-Դիւանը կը փափաքէր որ  
ընկերութիւնը կեանք ունենայ . և քանի որ  
անդամներն ալ համաձայնած էին Մայր-Դի-  
ւանին հետ , ուրեմն անդամներն ալ մեև-  
նոյն փափաքը ունէին :

Հիանալի ներդաշնակութիւն արտայայ-  
տութեանց :

Թիւ 26 ը կը յիշէ Սեպտ . 2 ի խօսք մը  
թիւ 24 ի մէջ : Կը խնդրուի այն ընթերցո-  
ղէն , որ պիտի կրնայ այդ բառերը գտնել  
յիշեալ 24 թիւի մէջ , հաճի մեզ իմացնել :

Եւ իբր ծաղկեփունջ՝ այն անդամները ,  
որոնք միամեայ փորձառութեան յետոյ կը  
գծկամակին հաւատք ընծայելու նախորդ  
Գործ . ժողովոյ Ալի բաշայական խօստուածե-  
րուն , այն անդամներն կ'ըսեմ , Մայր-Դի-  
ւանն ալ մէջն առնելով կ'ըլլան բզեզ , մը-  
ժեղ , մլուկ , միլեռանդ ( այս բառը իր  
մասնաւոր հասցէն ունի ) և այլն և այլն :

Վերջն ի վերջոյ նոյն այդ անդամները  
կը հրաւիրուին միանալ . - որո՞ւ հետ . - ի հար-  
կէ բզեզներու , մեղներու , մլուկներու ,  
միլեռանդներու հետ , վասն զի « նման ըզ  
նմանն սիրէ » :

Չենք ծանրանար տրամաբանութեան և  
բարոյականութեան վրայ այս հակասու-  
թեանց և այս անհամեմատուն , որոնք լոյս  
կը տեսնեն թերթի մը մէջ , սր պաշտօնը  
ստանձնած է ժողովուրդը առաջնորդելու  
գէպի . . . ո՛ւր , զայս կը հարցնենք նոյն  
թերթի վարչութեան նախագահ , լուսա-  
միտ դատաւոր Վսեմ . ԵՆՈՒՆՔ Աղիզ Պէյի :

Կը հարցնենք նաև որ եթէ աշակերտ-  
ներ իր դատարանին առջև բողոքէին ու-  
սուցչի մը դէմ , որ իրենց կ'ուսուցանէ իր  
նմանները նկատել իբր քառտանի - Նոր  
Օր թիւ 25 . կամ բազմտանի անասուններ ,  
ինք՝ լուսամիտ դատաւորը ի՞նչ վճիռ պիտի  
տար . պիտի ուզէ՞ր իր զաւակները յանձ-  
նել այդ ուսուցչին ձեռքը :

Մա ալ կայ որ դատարանին առջև Վ .  
Աղիզ Պէյ պիտի լսէր այնպիսի լեզու մը ,  
զոր պիտի հասկնար և բոտ այնմ պիտի  
վճռէր : Մինչդեռ « Նոր Օր » դժբաղդաբար  
հայերէն կը գրէ և ն . Վսեմութեան հա-  
մար հայերէնը Չինարէնի արժէքն ունի :  
Հոտ պիտի փնտռէ թերևս Աղիզ Պէյ  
իր արդարացումը . . . :

Եւ թերևս ալ պատասխանէ որ Պ .  
Մինաս Չերազ և Բաղմազէպ գրուատած  
են « Նոր Օր » ը . ինչդեռ է հասկնալ թէ՛  
Նոր « Օր » ի ո՞ր գրուածներու ակնարկած են  
յիշեալ իշխանութիւնը , և անոնց գնահա-  
տումը չ'ենք կրնար նկատել իբր քաջալե-  
րութիւն յար և նման այն քաջալերական  
խօսքերուն , զոր որ և է անհատ մը կ'ուզ-  
ղէ դպրոց երթալու սկսող տղու մը :

— Ս. Քէրիմ , տղաս , նայէ որ մարդ  
ըլլաս :

Ո՞ր խելագատակը անեղծ տղայ , այն  
ատեն կ'ըլլայ կը յոխորտայ թէ « ինք կա-  
տարեալ մարդ եղած է » :

Յ . Գ . Զգալի տարբերութիւն մը կը  
տեսնենք « Նոր-Օր » ի 26 թիւով Մայր-Դի-  
ւանին ուղղութեամբ նամակին և 105 թիւ « Ար-  
շալոյս » ով նոյն Մայր-Դիւանէն առ Տիար  
Ս . Բիւրատ ուղղած նամակին մէջ վե-  
րոյիշեալ նամակէն քաղուած հատուածի մը  
մէջ : Այդ հատուածը որ կ'սկսի « գալով ձեր  
սեպտ . 2 թիւակիր գրութեան » բառերէն  
ետքը կը պարունակէ իր մէջ բառեր և իմաստ-

ներ , զոր ի զուր կը փնտռենք Նոր-Օր ի  
հրատարակած նամակին ամբողջութեան մէջ .  
ճշմարտութեան հետամուտ անձինք պար-  
տական են որոնել և գտնել պաշտօնական  
նամակ մը այլափոխող յանդուգնը : Կրնայ  
ըլլալ որ հոտ ըլլայ Արիանի թերթ . . .  
Պ .

### ԴՐԱԽՏԻ ՓԵՍԱՆ

Ժամանակն գիշեր էր . եւ խոր գիշեր .  
աստղերը լուսահանդէս ունէին , որոց կը նստա-  
գանէր լուսնակն՝ իրենց թագուհին :

Այ կողմս սակայն սքանչելի տեսարան մը  
կար բացուած . հոն մուտ չ'կար . լոյս էր ամեն  
կողմ . ծաղիկ ամեն կողմ , թռչնեկաց հոգեզ-  
ուարճ գայլալիկն խառնուելով վտակաց քաղց-  
րածայն խոխոջին , նոր հրաշալիք մը կ'ածէին  
ի հանդէս :

Այս տեսարանին շուքած՝ յափշտակուած  
կը հայէի , ուր սիգալով կը ճէմէին մարդ մը ,  
ու կին մը :

Ասոնք ամեն մարդէ կատարելագործեալն ,  
ամենէն գեղեցիկն , եւ ամենէն երանելին էին :  
Հարցուցի , - ո՛ւր ենք մենք , եւ ո՞վ են  
ասոնք :

Ըսին զրախտին քովն ենք , եւ այն զոյգ ա-  
մուշները Ադամն ու Եւան են , զոր պսակադիրն  
Աստուած միացուց իւր Աստուածային կնքա-  
հայրութեամբն , որու համար Ադամ խոստովա-  
նելով ըսաւ , « այժմ սա ոսկր յոսկերաց իմոց ,  
եւ մարմին ի մարմնոյ իմմէ , սա կոչեցի կին ,  
զի յառնէ իւրմէ առաւ » :

Հարմնիքը լինցած էր , եւ մեղրալուսինը  
ձիւնաթոյր ամպով մը անցաւ զրախտի լուսա-  
պայծառ հորիզոնէն , եւ մարդկային ազգի դա-  
տակնիքը ձգեց հոն :

Աստուած մարդկային ազգի այս հրաշալի  
սկզբնաւորութիւնը տալէ ետեւ քիչ մը հանդիստ  
ընելու համար հետացաւ , եւ իւր նախաստղծին  
վիճակը հեռուէն դիտելու համար ծրարած էր լու-  
սաշող ամպերու մէջ , եւ անկէ կը դիտէր իւր  
նախաստղծ մարդուն խանդավառ կենցաղը :

Ադամ՝ որ բնութեան ամեն օրինակ ենթա-  
կայ էր , օր մը տեսնանք հայեցաւ չ'ընաղագեղ  
Եւային , եւ գնաց վարդի մը թուփին սակ Ե-  
ւային քովիկը նստելու :

Նկատելով որ գեղեցկութեան կատարելու-  
թիւնը կը փայլի հոն , - ըսաւ . Եւայ՝ քիչ մը քո-  
վիկս եկուր »

Եկու՛ր , եկու՛ր , քիչ մ'ալ եկու՛ր :

Աւելի եկու՛ր :

Եւան որ Աստուծոյ հրամանաւ պարտաւոր  
էր իր էրկանը հնազանդելու . այնպէս ըրաւ , եւ  
գնաց Ադամ աղային քովը նստաւ :

Ադամ չ'դիմանալով Եւային հրապուրիչ գե-  
ղեցկութեանը , քիչ մը սեղմեց , եւ բաւական  
չ'սեպելով ձեռքը երկնցուց եւ ազդրին սառածիկ  
կամիթ մը տուաւ :

Կամիթը անդրանիկն էր , եւ Եւան գեռ չէր

վարժած այն կամիքին, մէկէն ի մէկ—ո՛ւֆ—  
պոռաց. Ադամ, կ'երևի թէ համով եկաւ իրեն,  
իւր կամիքները շարունակեց, Եւսոյի կակծակի  
ձայներուն կարեւորութիւնն չ'աւարով:

Եւսոյ ինչպէս ըսինք կամիքի վարժ չ'էր,  
սկսաւ բարձրաձայն աղաղակել. Աստուած որ ա-  
կընդէտ կը հայէր իւր բարիձայնի նորաստեղծ-  
ներուն վրայ, եկաւ ամպով, (որովհետեւ վ'երը  
շանձօ չ'կայ) եւ բաւական բարկացած հարցուց.  
« Ադամ, չ'ես ամչնար. ի՞նչ է ըրածդ »:

Այս պարագային մէջ ով որ ալ ըլլայ կը շրջո-  
թի, Ադամ ինքզինքը ժողուեց, եւ ըսաւ, Տէր  
Աստուած, ինձի առած ընկերիդ հետ կատակ  
կ'ընեմ կոր:

— Ես անի քեզի կատակ ընելու համար չ'տը-  
ուի:

— Բայց ուրիշ բան մ'ալ չ'ըսիր, կրնա-  
յինք անբանի պէս իրարու երես նայիլ, բնա-  
կան է որ, կատակ մը պիտի ընէինք, եւ ը-  
րինք:

— Գահիրէի մէջ կամիքի կատակը գրեթէ  
մեծ մասամբ ամէն օր կայ, հոն սորվեցայ:

— Որովհետեւ այս մեծ մեղքը գործած ես,  
պէտք է որ դժոխք երթնաս քաւելու համար:

— Լաւ կ'արթամ, սա իրաւամբ որ ամեն  
կամիք ստուգներ ալ հոն երթան, որոց մէջ շատ  
մը բարեպաշտ տէրտէրներ. շատ մը Աստուածա-  
պաշտ վարդապետներ, եւ շատ մը եպիսկոպոս-  
կոստներ կան, ուր տեղ ալ չ'պիտի գտնանք  
նասելու:

— Այ՛ո, անոնք մեղաւոր են, ես անոնք  
պիտի պատժեմ. (եթէ կրնաս) բայց դուն պէտք  
է դժոխք երթնաս, վասնզի կամիք տուած ես ան-  
մեղ Եւսոյին:

Լաւ, Աստուած, դուն ալ Մարիամ Մագ-  
թաղենացիին կամիք տուիր, երբ ոտքերուդ  
վրայ իւր կը թափէր, ինչո՞ւ քեզի համար ալ  
դժոխք, եւսոյն չ'գրեցիր, « ես որովհետեւ . . .  
Ահա այդ է որ մեր ամեն իրաւունքը ոտնակոխ  
ըրաւ ու պիտի ընէ: »

Ս. Յ.

### ԻՏԱԼԱՅԻ ԱՐՔԱՅԱՊԱՆՆԵՐԸ

(Շարն. Գ. թիւնն եւ վերջ)

Թագաւորը վարկեան մը իսկ իր պաղա-  
րիւնութիւնը չ'կորսնցուց, միակ մտածում մը  
ունեցաւ. այն է՝ թագունին վստահեցնել « ասի-  
կայ գէշ կատակ մ'է » ըսաւ անոր, այս պատ-  
մական բանաձեւը գտած էր զոր վերջին ոճիւրը  
ստակալի այժմէութիւն մը ըրած է « ասոնք ար-  
հետին պատահական շահերն են »:

Մարդասպանը իր դանակը ճամբուն եզեր-  
քի որթատունկերուն մէջ նետած էր, գտան  
զայն, հատատունն եւ մահացու գաշոյն մ'էր,  
վրան խաչ մը փորագրուած:

Մարդասպանին անունն Բիւթրօ Աչչիարի-  
թօ էր. ծնած էր, իր աւաղակներով նշանաւոր  
գաւառի մը, Արթէնարի մէջ, Երկաթագործ մ'էր  
նա: Չերբակալուած պահուն ըսաւ. « չ'յաջողե-  
ցայ. աւելի լաւ իրեն համար. » երեսփոխանա-  
կան ժողովի գանձապետաց գիււանին մէջ բա-  
ցարձակ սրտի անդորրութեան մէջ էր. երբոր  
իւր արհեստը հարցուցին, անօրի (աֆֆամաթօ)  
պատասխանեց եւ բացատրեց.

— Բաւական ժամանակ կայ որ մեզի հրա-  
մայողները մեզի անօթի մեռնելու կը գտա-  
պարտեն, այսօրուան օրս որմնադիրները, մար-  
մարագործները, ատաղձագործները, քարակո-  
ները արհեստներն փոխել կ'ըսկան, ամենքս ալ  
միեւնոյն սեսակէն ենք, անօթիներ ենք, անօ-  
թիներ:

Իրեն հարցուցին թէ ու՞ր կը բնակի:  
— Ուր կ'ուզէք որ ինձի նման թշուառ սո-  
վաման արարած մը բնակի, փոքրիկ խանութ  
մը ունէի ստիպուեցայ գոցել: Ամեն գուռ զար-  
կի եւ շուն մը չ'գտայ որ ինձի օգնէր, անօ-  
թութիւնը գէշ խորհրդատու մըն է: Այսօր այս-

չափ հարուստ ու երջանիկ մարդիւր տեսած պա-  
հուս որք փորձերն լեցուն կ'երթային գեղեցիկ  
օր մը վայելելու ձիարշաւին տեղը, եւ մտածե-  
լով որ թագաւորը յաղթող ձիուն 24000 ֆր.  
պիտի տար, ես որ գրպանս սանթիմ մը չ'ու-  
նէի, կատաղութենէս ըրի ինչ որ ըրի:

Ամիկա դէպք մըն է որ շատ կը պատահի  
այս տեսակ ողբերգութեանց մէջ: Անիշխանա-  
կանին հայրը արդէն իր տղուն մէկ քանի բուռն  
խօսքերը նշմարած եւ ոստիկանութեան իմա-  
ցուցած էր, որ սակայն կարեւորութիւնն չ'էր  
տուած:

Սակայն շատ զարմացած երեւցան, տեսնե-  
լով որ վերջին արքայասպանը ոչվօլէր գործա-  
ծեց. գաշոյնը իսպաղանց ամենուսիրական զէն-  
քը ըլլալով, եղած դիտողութիւնը շիտակ է:  
Բայց պէտք է ըսել որ Աչչիարթօ վարանած էր  
երկու զէնքերուն, իր գործածած գաշոյնին եւ  
ստրճանակի մը մէջ, բայց սակայն վերջինը  
ճահիճի մը մէջ նետեց, ոճրին գործած նա-  
խորդ օրը, որովհետեւ փողը շատ նեղ էր, եւ  
իրաւ ալ ասրճանակը— որ յետոյ գտնուեցաւ—  
միջակ զէնք մ'էր, առանց հատուցութեան:

Աչչիարթօ արացած է իր մեղսակից ունե-  
նալը. իր գործածած լեզուն ոճրին աղբերու-  
թիւնը կը ծանուցանէր: Խենդ մըն էր. իրա-  
ւարանելով իր խենդութիւնը եւ միեւնոյն ժա-  
մանակ պարծենալով թէ թագաւորը սպաննե-  
լով ընկերական չարիքները պիտի բաւնար,  
որովհետեւ նա էր բոլոր չարեաց հեղինակը:

Կաէթանօ Պրէստին ինչ կապատէ, իր նա-  
խորդներուն պէս պատիժ մը պիտի ընդունի հար-  
կաւ. որովհետեւ մահու պատիժը ջնջուած է Իտա-  
լիոյ մէջ, ց կեանս տաժանակիր աշխատութեան  
պիտի գոտապարտուի:

Բայց նախ եւ առաջ խցիկի մը մէջ պիտի  
բանտարկուի: Ասիկա ստակալի չարչարանք մ'է  
Իտալացի յեղափոխական Ամիլիար Չիբրիանի,  
դատապարտուած է խցիկի պատժին, առանց  
սարտուի չ'ես կրնար լսել իր պատմութիւնը եւ  
այն խելամիտ միջոցները, որ ի գործ դրած է՝  
այդպէս րեժիսի մը տակ չ'մեռնելու համար:

Բանտարկեալը գետնափոր զնգանի մը մէջ  
է (իւր քր պաս ֆօս) շղթայակապ, լոյսի երես  
չի տեսնէր, մարդկային ուր է բարբառ ական-  
ջին չ'հասնիր, գերեզմանն է այդ իր բոլոր սոս-  
կումով:

Բասանանդէն երբ դուրս հանուեցաւ կա-  
տարելապէս խենդեցած էր, Աչչիարթօ դեռ 6  
տարի այդ րեժիսին տակ պիտի մնայ, այդ թի-  
արան պիտի շրջուի:

Տեսնենք Պրէստին:

### ՎԱՂՈՒԱՆ ԺՈՂՈՎԸ

Հարց. — Լսարան—Ընթերցատան Սեպ-  
տեմբեր 9 ի ժողովը՝ որ ըստ նախապէս ե-  
ղած յայտարարութեան՝ Միութիւնն տպա-  
րանին կողմէ ընթերցատան յատկացուած  
մասին մէջ տեղի պիտի ունենար, ինչո՞ւ  
ըստ վերջին յայտարարութեան՝ տեղի պի-  
տի ունենայ Տիար Ս. Փափազեանի բնա-  
կարանը:

Պատ. — Շատ մը պատճառներու հա-  
մար:

Հարց. — Որո՞նք են այդ պատճառները:  
Պատ. — Ահաւասիկ է Ա. Լսարան—Ըն-  
թերցատունը հանրային տեղ մ'է, իսկ բը-  
նակարանը ո՛չ է Բ. Ամեն հայ կարող է  
մտնել ընթերցատունը, իսկ բնակարանին  
մէջ ընտրեալները միայն: Գ. Ընթերցա-  
տան մէջ ամէն ոք ազատ է խօսելու եւ  
գիտողութիւններ ընելու, իսկ բնակարա-  
նի մը մէջ, մանաւանդ եթէ քիչ շատ ճա-  
շակով կազմաւորուած եւ զարդարուած ըլ-  
լայ այն՝ նախ քիչ խօսելու է տան տիրոջ  
գլուխը չի ցաւցնելու համար. երկրորդ՝

քիչ տրամաբանելու է անկրթութիւնն ըրած  
չ'ըլլալու համար. երրորդ՝ միշտ « Այո՛ », « Տէ՛ր », ըսելու է ձեզ հիւրնկալող եւ մե-  
ծարող տան տիրոջ դէմ ապերախտ չ'գրո-  
նուելու համար:

Հարց. — Ա՞յս է ամենը:

Պատ. — Ո՛չ, ուրիշ պատճառ մ'ալ կայ:

Հարց. — Ո՞րն է:

Պատ. — Նոյն իսկ ո՛չ անդամներն ալ  
կրնան երթալ ընթերցատունը, իբր ունկն-  
դիր. իսկ բնակարանին մէջ կրնան զննուիլ  
միայն դիպուածով ժողովէն առաջ եկած  
այցելուներ, որոնց՝ ժողովոյ պատճառաւ՝  
ճամբայ տալ անվայել կ'ըլլայ, հետեւաբար  
անոնք ալ ներկայ կը գտնուին վիճաբանու-  
թեանց, հարկ եղած ժամանակ միջամտե-  
լու եւ երկու կողմը ուղղաշարուիլ ընելու  
համար:

Հարց. — Ատ ի՞նչպէս կ'ըլլայ:

Պատ. — Ինչպէս կ'ըլլան չ'եմ գիտեր.  
Բայց եթէ ինձի չ'ես հաւատար, վաղն ի-  
րիկուն՝ հետեւէ ժողովէն ելլողներուն եւ  
գրեթէ ամենուն բերնէն պիտի լսես սա  
խօսքը.

— Ա՛խպար, շատ բան կար ըսելիք ա-  
մա, ի՞նչ ընեմ քի մարդուն տունն էինք. . .  
Հէլէ սա մօրուքը տեսա՞ր. միշտ անխո-  
րիակ ընող մօրուքը. չ'էր ձգեր որ մէկը  
բան մը խօսի:

Հարց. — Իրա՞ւ կ'ըսես:

Պատ. — Գնա՛, տես եւ դատէ՛:

Հարց. — Լաւ. ի՞նչ տարբերութիւն կայ  
ընթերցատան եւ բնակարանին մէջ:

Պատ. — Նոյն տարբերութիւնը որ  
կայ եգիպտոսի եւ Տաճկաստանի մէջ:  
8 Սեպտ. 1900 ՏԱԿՕՊԷՌ

### Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Լոնտոն 4 սեպտ. — Օգոստոս 20 ին Իրի-  
տանական շոկատ մը, երբ զննութիւն կը  
կատարէր Բէքինի հարաւային կողմը, կայ-  
սերական որսավայրի մօտ, գտաւ եւ ցրուեց  
հազարի չափ կանոնաւոր զինուոր եւ Պօքսըր,  
որոնցմէ 30 ը սպանուեցան. յետոյ շոկա-  
տը հրդեհեց հինգ գիւղ: Կորուստ մը չը  
լսուեցաւ, անկէ ի վեր թշնամին չ'երկար:

Ուաշինկթըն 4 սեպտ. — Ժէնէրալ Չէ-  
ֆի Թիէն—Չինէն կ'իմացնէ որ թշնամու-  
թիւնը դադարեցան բացի մի քանի անշատ  
հրացանաձուլութիւններէ: Բէքինի երկաթու-  
ղին այն ատեն միայն պիտի կրնայ նորոգ-  
ուիլ երբ շուրջը սաւին:

Լոնտոն 4 սեպտ. — Հինգ գօմանտօ կը  
չրջապատեն Լէտիպրէնտը, որուն պահակա-  
զօրքը մօտէն նեղուած է: Հրնթըր օգնու-  
թեան կը վազէ շտապաւ: Պատէն Բօուէլ  
Իրէթօրիայէն Գէյթթաուն մեկնեցաւ:

Լոնտոն 4 սեպտ. — Պօէրնիքը խստա-  
պէս կը պաշարեն Լէտիպրէնտը: Լորտ Ռօ-  
պըրթս Պէլթասթէն կը հեռագրէ որ Ժէնէ-  
րալ Պըլլըր՝ որ Լիտրնպուրկի վրայ կը քա-  
լէր՝ սաստիկ ամրացած գտաւ Պօէրնիքը:  
Լսրտ Ռօպըրթս օգնութիւն կը զրկէ անոր:  
Շանկհայ 6 Սեպտ. — Աւստրիացիք 50  
հոգի ցամաք հանեցին իրենց սեփականու-  
թեաց պաշտպանութեանը համար: Գանթօնի  
մէջ յուզմունքը կ'ուելնայ: Եւրոպական  
ապրանք ծախող տեղացիներուն խանութ-  
ները թալլուեցան: Յառաջիկայ շաբաթ օր  
որ լսպտերներու տօնախմբութեան տարե-

դարձն է, խառնակութիւններու վախ կայ: Կ'ըսուի թէ տեղացի զօրքեր՝ Լի-Հունկ-Շանկի հրամանով Պօքարները կը ջարդեն Եիւնանի և Չէլի մէջ:

Վաշինկթըն 6 Սեպտ. — Կ'ըսուի թէ Գերմանացիք Բէքին պիտի մնան, նոյն իսկ և թէ Թուսիան ետ կը քաշուի: Կ'սպասուի որ միւս տէրութիւններն ալ նոյնն ընեն:

Լոնտոն 6 Սեպտ. — Ո՛չ ժէնէրալ Պըլլ-Արո՛ն չ'Պօթա շարժում մ'ըրին երեքշաբթի: Օգնութեան զօրքերը հասան Պըլլըրի քով:

Լոնտոն 6 սեպտ. — Պօէրները թողուցին Լէտիպընտը, վաճառատունները թալլելէն և ձիերը առնելէն ետքը:

Լոնտոն 6 Սեպտ. — Պ. Սթէյն նախապահ Գրիւկէրի քովն է միշտ, և զայն կը համոզէ անձնատուր չ'ըլլալ ցորչափ Տըվէթ շարունակէ պատերազմի:

Լիզպօն 6 Սեպտ. — Բօրթուկալի տէրութիւնը հազար հոգիէ բաղկացեալ զօրապետը մը պիտի խրկէ Լօրէնսօ-Մօրքէզ:

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

#### ՊՕԷՐ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐ Ի ՌՈՒՍԻԱ

Տր. Լէյտս ընդունուեցաւ Չարին կողմէն, խօսակցութիւնը շատ երկար տեւեց:

Կայսերական տեղափոխութեանց համար նախապէս եղած կարգադրութեանց պատճառաւ Պօէր պատգամաւորները չի պիտի կրնան տեսնել Կայսրը:

Չարը, որ զօրաց շարժումը ձգած էր հապընդճեպ Ս. Բեթրապուրկ գալու համար, այսօր վերստին կը մեկնի դէպ ի Խըրիմ, ուր պիտի երթայ, ճամբու դադարէ մը ետքը՝ իր որսական զոյճակներէն մէկուն մէջ:

Պօէր պատգամաւորները գոհ կ'երևան թէ՛ իրենց ճամբորդութենէն և թէ՛ Ռուսական կառավարութեան իրենց ցոյց տրուած նպատատուր արամադրութենէն:

### Թ Ե Ր Թ Օ Ն

#### Ի ՆՉՈՒ ԶԵՆՔ ՅԱԶՈՂԻՐ

#### ՆԻՍՏ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

(Զուէշտ մէկ արար, շատ մը տեսիլներ ու պատկերներ):

«Յայտագիրը որչափ որ ժամը 3 ին նշանակուած էր ժողովոյ բացումը, բայց Ատենապետ էֆ. ժամը և ին հազիւ կարող եղաւ բեմը ելնել ու ամենայն վիտութեամբ եւ հետեւապէսները, նամանակէսները ի լուր ժողովականաց յեղյեղել և անչափ կրկնել որ ԹԱՐՍՈՍԵԱՆ էֆն. բարեկարգեցաւ զիտել տալու թէ դասաւորութեանց հարկ չ'կայ. աւելի լաւ է որ պարզ խօսի:

ՇԱԹՕԵԱՆ էֆ. — Ատենապետ էֆ. կ'աղաչեմ որ Թարսսեան, էֆն. ի կարգ հրաւիրէք, և թէ ոչ...»

ՊէՉԻԿՃԵԱՆ էֆ. — Եթէ ոչ ի՞նչ. պէտք է որ բացայայտ խօսիք, որպէսզի ունկնդիրները հասկնան ինչ որ խօսիլ կ'ուզէք:

ՏԵՐՊԱՊԵԱՆ էֆ. — Ձեր Թարսսեան էֆ. ի ճանակցելու իրաւունք կուտայ մեզի խնդրել ձեզի դէմ խիստ միջոցներ:

ԱՏԵՆԱՊԵՏ էֆ. — Կաղաչեմ, լուր թիւն, և թէ ոչ պիտի ստիպուիմ...»

ԹԱՐՍՈՍԵԱՆ էֆ. Պիտի ստիպուիս օրակարգին անցնել մենք ալ ատ կուզենք:

ՇԱԹՕԵԱՆ էֆ. — Դուք պարզապէս խռովարարներ էք. չէք ուզեր որ Պարոնը իւր ատենաբանութիւնը շարունակէ...»

#### ԼՈՐՏ ՌՈՊՐԹՍ ԴՐԱՄԱՀԱՒԱՔ

Լորտ Ռոպրթս յայտարարութիւն մը հրատարակեց, որուն համեմատ ոսկեվայրերու, հողերու, հանքարուեստներու, և այլն ներկայ և բացակայ բոլոր սեպհականատէրերը, Թրանսվալի Բրիտանական զօրաց կողմէն գրաւուած մասին մէջ պարտաւոր են զօրապետին կողմէն նշանակուած հարկահաւաքին վճարելու Թրանսվալի կառավարութեան վճարուելի բոլոր հարկերը. իրաւունքի փոխանցութիւն, նոր իրաւունքի արձանագրութիւն արտօնուած չ'են ց'որ տընօրինութիւն:

#### Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Մարէշալ Վօն Պիպերսթէն՝ Գերմանական դեսպանը՝ Կ. Պոլիս հասնելուն պէս արտաքին գործոց նախարար Թէֆթիք փաշային այցելեց:

Դեսպանը՝ հացկերութէ մը ետքը, որ տրուեցաւ Երլաբզ քէօշլ՝ երկարատեւ ունկնդրութիւն մը վայելեց Սուլթանէն:

Այս տեսակցութիւնը, որ սովորական ընդունելութիւններէն դուրս է, իսկ մը մեկնութիւններու ծնունդ տուաւ:

Հաստատապէս կ'ըսուի որ՝ ունկնդրութեան միջոցին՝ Սուլթան և դեսպան երկարօրէն խօսեցան ընդհանուր կացութեան վրայ:

Հ. Տը Պրէն և Ժ. Պօնարտիէր, որոնք Պէյրութ գտնուող Ֆրանսայի բժշկական վարժարանի մէջ բրօֆէսէօր են, Սուլթանին հրամանով Կ. Պոլիս կանչուած էին նախորդ մեծ Եպարքոս ձէվատ փաշան խնամելու համար: Յիշեալ բրօֆէսէօրները, իրենց բնակութեան միջոցին մայրաքաղաքին մէջ, կայսերական ամենաբարձր մեծարանաց առարկայ եղան, և երբ կը մեկնէին, ստացան իբր պապոյց Սուլթանին մասնաւոր համարումին, և անոր թիկնապահներէն միոյն միջոցաւ՝ մին մէծիտիէյ կարդին մեծ սպայ շքանշանը և միւսը՝ հրամանատարի փողկապը:

ՓեշիվԱՆԵԱՆ էֆ. — Օրինաւորութիւն պահելու համար կ'իբրով խօսելու տեղը չ'կայ ԹԱՐՍՈՍԵԱՆ էֆ. Եթէ անհամբեր գտնուուեցաւ, մենք կաղաչենք որ Պարոնը շարունակէ իւր ատենաբանութիւնը եզրակացութեան մը հասնելու համար (Աջակողմէն շատ մը ձայներ — Այ՛ո, այ՛ո, շարունակութիւն):

ԹԱԹՕԵԱՆ էֆ. — Հօսս լուր թիւն...»

ԱՏԵՆԱՊԵՏ էֆ. — Այո՛, լուր թիւն. պիտի շարունակեմ (ձեռքը դէպի իր քով նստած Ատենապետին երկնցնելով) Այո՛. պիտի շարունակեմ եւ պիտի ցոյց տամ թէ սա անլայել է ընկերութեան եւ նամանակահատի մեզի, ապօրինի իբրեւ անդամ ատենապետի ունենալ քովը նստիլ զիւան կազմել և ընկերութեան սրբազան մատենաները անոր յայնձնել:

ՊէՉԻԿՃԵԱՆ էֆ. — Ինչպէս Ատենապետը նոյնպէս ալ Ատենապետը նուիրական են մեզի համար. կը բողոքեմ ձեր ըրած նախատանաց դէմ:

ՇԱԹՕԵԱՆ էֆ. — Դուք ո՛վ էք որ կը յանդգնիք անարժան մէկը պաշտպանել մեզի դէմ:

ԹԱՐՍՈՍԵԱՆ էֆ. — Մենք պարտուց եւ իրաւանց տէր անդամներ ենք. գոհացում կը պահանջենք ժողովոյ հարազատ քուէով ընտրուած ատենապետին դէմ եղած նախատանաց:

ՇԱԹՕԵԱՆ էֆ. Գոհացում այն ատեն կը լինի երբ ատենապետը բեմէն վար կ'իջնայ:

ՊէՉԻԿՃԵԱՆ էֆ. Դուք այս դուռնէն դուրս կ'ընաք ելնել բայց ատենապետը իւր բեմէն վար չ'իջնար...»

ՏԵՐՊԱՊԵԱՆ էֆ. — Ի՞նչ. կ'սպասուե՞ք արդ-

#### Բ Ա Յ Մ Ա Ն Հ Ա Ն Դ Ե Ս

#### ԼՍԱՐՍՆ — ԸՆԹԵՐՅԱՏԱՆ

Գործ. Ժողովս պատիւ ունի ծանուցանել յարգոյ հասարակութեան որ, յառաջիկայ կիրակէ օր, 9 Սեպտեմբեր 1900, կէս օրէ առաջ ժամը 10 ին տեղի պիտի ունենայ Լսարան-Ընթերցատան բացման հանդէսը ի Բազար Մուրուր:

Ուստի ամեն անոնք, որք կը հետաքրքրուին ժողովրդի մտաւոր զարգացման գործով՝ կը հրաւիրուին ներկայ գտնուիլ ի Պիմաց Գործ. Ժողովոյ:

Ատենադպիր. Ատենապետ. Օ. ԹՈՒՄԱՆԵԱՆ. ՏՐ. Ժ. ԷՎԼԵԱՆ.

#### Մ Ե Մ Վ Ա Հ Ա Ռ Ա Տ Ո Ւ Ն

#### ԺԱՄԱՅՈՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ

#### « ԾՕՆԾՎՐԱԾ »

#### Ք. ՍԵԼՎԱՃԵԱՆ

#### ԳԱՀԻՐԷ — ՄՈՒՖԻ ՓՈՊՈՅ — ԴԱՀԻՐԷ

Ապրանքներուն լաւագոյնները ընտրած է և ամենէն դիւրամատչելի գներով կը վաճառէ:

ԴԻՄԵՑԷՔ ԵՒ ՊԻՏԻ ՏԵՍԷՔ:

#### Կ Ա Ր Ե Ի Ո Ր Ա Չ Դ

Նոր կեանք ի եւ Անահիտ ի Անթրի մի հաւաքածոյն ունենալ փափարողք առիթը ձեռքէ չ'փախցնելով փութով Խճար գրատունս դիմեն, դիւրագին զայնս գնելու:

Եօք...»

ԹԱՐՍՈՍԵԱՆ էֆ. — Ոչ թէ կ'սպասուե՞ք, այլ կուզենք հասկնալ թէ ո՛վ է որ պիտի համարձակի ատենապետը բեմէն վար իջնցնելու...»

ՓեշիվԱՆԵԱՆ էֆ. — Հանդարտեցէ՛ք, Թարսսեան էֆ. ժողովը երբ ընտրութեան ձեռնարկէ եւ նոր տեսադպիր մը ընտրէ, չ'իւր իւր աթոռը նորին կուտայ:

ՊէՉԻԿՃԵԱՆ էֆ. — Բայց իր դէմ եղած նախատիք...»

ԹԱԹՕԵԱՆ էֆ. — Իրեն հարցուցէ՛ք. ինքն ինչ՞ ու համար չ'խօսիր:

ՇԱԹՕԵԱՆ էֆ. — Ինքն իր յանցանքն գիտնալուն խօսելու վիճակին մէջ չ'է:

ԱՏԵՆԱՊԵՏ էֆ. — Ներհե՛ք, ես օրինաւոր ժողովէ ընտրուած օրինաւոր ատենապետ եմ, եթէ անվստահութիւն ներշնչած եմ ժողովը գաղտնի քուէով կ'ընայ որոշել:

ՇԱԹՕԵԱՆ էֆ. — Քանի մը պտտորի ջրաբազուէններ հաւաքած հոս բերած էք. կ'ուզէք մեզի խաղ խաղալ:

ԹԱՐՍՈՍԵԱՆ էֆ. Լ.Ո՛՛՛՛, թշուառական, ասոնք ամենքն ալ քեզի պէս վճարող եւ պարտուց եւ իրաւանց տէր անդամներ են:

ՊէՉԻԿՃԵԱՆ էֆ. — Պարոն Եաթօեան, միթէ զձեզ ազնուական կը կարծէք այս պայտրը ջրաբազուէններուն հանդէպ:

ՇԱԹՕԵԱՆ էֆ. — Իմ ազնուական լինելս շատ հեռի չ'է. բայց այս շուրջ ի՞նչ իրաւամբ զիս թշուառական կը կանչէ:

ԹԱՐՍՈՍԵԱՆ էֆ. — Շուրջ դուրս ես, շուրջ

(Շարունակելի)

Ա Ձ Դ

Գրիի Օրոր գիւղի Ազգայիններէն Տիար Մարտիրոս Եանօեանի սրբի Պ. Կարապետ Եանօեան 26 ամեայ երիտասարդը Հայաստանի զէպրեքէն ի վեր անհետացած է և իւր Գահիրէաբնակ աղբակները կ'ուզեն գիտնալ թէ ո՞ւր կը գտնուի այդ երիտասարդը:

Կը խնդրուի ուրեմն մեր Պատ. Ազգայիններէն որ եթէ գիտեն յիշեալ երիտասարդին ուր գտնուիլը կամ եթէ ո՛ր և է տեղեկութիւն ունին անոր մասին, բարեհաճին ծանուցանել Արշալոյս ի Տնօրինութեան:

Նոյնպէս կը խնդրուի մեր Արտասահմանի Պատուարժան պաշտօնակիցներէն, որ շնորհ ընեն ներկայ ազգարարութիւնը կրկնել իրենց թերթերուն մէջ. ի հարկին նըմանօրինակ ծառայութիւններ սպասելով մեզմէ:

Գ Ա Ֆ Է Ե Փ Ր Ա Տ

ԱՊՏԻՆ — ՊԱՊ — ԷԼ — ՊՕՍԹԱՆ

Պաշտիկն եւ Նուագածուաց իւնքի Զօրանցիկն ձիւջոս դիւնացր

ՕՂԱՆԵՒՄ ՄԻՄՈՆԵԱՆ. ԵՒ

ԳԱՆԵԼԻ ԼԱՅԱԳՈՐԾԵԱՆ ՈՆԿ.

Պատիւ ունին ծանուցանել Արգոյ ազգայնաց թէ՛ հանդատի ժամերն առողջարար օդ ծծելով զուարճանալու և զովարար ըմպելիներով յոգնած մտքերը կազդուրելու համար, կրնան գիտնել ԵՓՐԱՏ ՄՐՃԱՐԱՆԸ, որ վերոյիշեալ Ընկերութիւնը ամենամեծ հոգածութեամբ և խնամով զարդարած և յաճախորդաց հանգիստը ինկատի ունենալով պատշաճագոյն վիճակի մը մէջ գըրած է:

ԳԱՅԷ ԵՓՐԱՏ ի մէջ կը մեծարուին զովարար ըմպելեաց ամենամաքուրները. ընտիր և թարմ՝ օշարակներ, անխարդախ սուրճ և սնխաւն կաթ:

Մասնաւոր խնամքով կը պատրաստուի նաև մրգաթան և չամչարակ (խոշապ):

Հոն գիւմուղ յաճախորդք գոհ պիտի մնան, գտնելով մաքրութիւն, ճաշակաւոր սպաս և անթերի ծառայութիւն, ամենէն խոտապահանջները գոհացնելու աստիճան:

ՀԱԿԱՔԱԾՈՅ

ՀԱՅՈՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ

ԻՏՆՕՐԷՆ Լ. ԵՂԱԶԱՐԵԱՆՑ — ԲԱՐԻՁ

Ականաւոր և Կեղինակաւոր երաժիշտներու անկողնութեամբ եռաձայն և քառաձայն պատրաստուած սոյն հաւաքածոյէն գնել փափաքողներն կամ բաժանորդագրուիլ ուղղուեն, կրնան գիտնել՝ Արշալոյս ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ Հիմնադիր-Տնօրէնին:

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԱՐՇԱԼՈՅՍ

ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԼ ԱԶԻԶԻ ՍԿԻԶԲԸ

Օսանիչի ղեղարանին դիւնացի փոքրցիկ մեջ.

Տպարանը բաց պիտի ըլլայ ամեն օր, առաւօտեան ժամը 7էն մինչև երեկոյեան ժամը 8: ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, մաքուր և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ, կ'ընդունուին.

Այցեխարտեր, Երջաքերակներ, Գիտեր, Հրախարտեր, Մանուգրներ, Տեղեկագիրներ, Կանոնագիրներ, Տոմար և այլ և այլ վաճառականական յանձնարարութիւններ:

Ամենակատարեալ ճշգրտագոյնութիւն և չափաւոր գին:

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԻԿ ԵՆ.

—Մեր մրցակիցներուն արգէն մեզմէ առած դասերէն օգտուելով տեսնելով այս անգամ բոլորովին նոր բան մը սորվեցուցած ըլլալու գոհունակութիւնը վայելելու համար, ԱՐՇԱԼՈՅՍԻ « ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ » ին վրայ երկու նոր ճիւղ ևս աւելցուցինք. այն է՝ ԳՐԱՏՈՒՆ, — ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ: Հիմեալ 1 Սեպտեմբեր 1900:

Ա. պօն անքանճեօն ապի՛ւ. . . . Ու մեր կողմանէ կ'աւելցնենք հպարտօրէն.

Ընդօրինակողներ, մեր հետեւելու սովորութիւնը անքերի՛ գործարեցիք:

ՀԱՅ ՃԱՅԱՐԱՆ ՄԻՋԲԱՆ ԵՂԱՐԱՐ ԳԱԶԱՆՃԵԱՆ ՇԱՐԻԱ ԱՊՈՒ — ՍԱՊԱՀ

Նեով — Իւնիվերսի Դեղարանին դիւնացր

Որ և է կերակուր արտօժանած և սընդարար ըլլալու համար պէտք է, մսի, իւղի, բանջարեղինաց լաւագոյն տեսակը ընտրել. այն համազմամբ որ անդարար կերակուրը ստամոքսին կենսատուն է, ով որ ստամոքսին յարմար կերակուր չընտրեր արտօժանելն թշնամանանք կ'ընէ:

Իրենց կենաց բարեկամ եղողներն կը հրաւերենք յաճախել մեր վերոյիշեալ ճաշարանը, վստահ ըլլալով թէ՛ գոհութեամբ պիտի մեկնին:

Գիներն ԴԻՒՐԱՄԱՏՁԵԼԻ ԵՆ:

Տ Հ Ի Մ Ի Զ Ո Ւ Ա Լ Ա Յ Ց Կ Ե Ն Ա Ց Ա Պ Ա Հ Ո Վ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ ԵՐԱՇԵԱՒՈՐԵԱԼ ԳՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահարածիները:

Ապահովագրեալներուն արգէն վճարած է կամ ինպատարանց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ այնպէս ուրիշ օր և է ընտրութենէ մէկ միլեար աւելի է:

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ իրահիրէ

ՏՕՐԲ. Ա. Յ. ԲԵՐԵՍՈՒԹԻԱՆ

Ի Շարեա Գործ-Պէշ, թիւ 20

Իր Ձրի խորհրդակցութիւնները ասկից վերջը, միայն ուրախօք օրերը կես օրէ առաջ ժամը (ը. ե.) 9էն 11 որոշած ըլլալով կը խնդրէ մեզմէ ծանուցանել զայդ, ի գիտութիւն իրեն գիտել ուզող աղքատ հիւանդներու:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՍԱՍՈՒՆ ԵՒ ԶԷՅԹՈՒՆ

Մերունի Տիար Ս. Ֆէլէկեանի վերոյիշեալ հեղինակութեան ՀԻՆԻԵՐՈՒՄ Ֆօրման ալ հրատարակուած է:

Բաժանորդագրուելու փափաքողք, ինչպէս արգէն ծանուցուած է, կրնան գիտնել « Արշալոյս » ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԸ. ուր հեղինակը կը գտնուի կէս օրէ վերջ ժամը 5-7:

ՀՆԵՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԱԹ 7 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1900

Table with 6 columns of numbers: 87 9549 1090 3825 2399 2358, 5287 6834 3276 6896 6357 1815, 2611 8326 630 8687 2793 4530, 7738 8860 9482 856 5161 3448, 6004 6099 4025

ՏՕՔԹ. ԺՈՐԺ Փ. ԷՎԼԻԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՏԱՐԱՐՈՑԹ

Ապսիկ Շարա Գուպրի Թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ ակուաներ:

Կը դադրեցնէ վայրկեանայէս ակուայի ցաւերը, ամենիկեան նորագոյն մեթօտով իւր պատրաստած դեղերով:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած ակուաներուն տոկունութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ:

Վկայեալ աղքատներու ձրի դարմանում, ամեն օր կէսօրէ ետք ժամը 3-5:

Այնպէս մէջ գտնուող ուրիշ օր և է ընկերութենէ աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրին կը գանձէ:

ԱԼԷԻՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ ԳԼԽԱՆՈՐ ԳՈՐԾԱԿԱՏԱՐ յ'Աղբ. քանդակ: